ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ

Թրաստիի & Ինվեստորների Խնամքից

2010

ՀԱՅԱՀՈՒԹՅԱՄԲ ՍՏՈՒԳՎԱԾ ԿԱՄՈՒՐՋԵՐ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ [3]

2 ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [5]

3 ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ [6]

4 ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ [8]

5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ [8]

6 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ [12]

7 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ [13]

8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ [14]



ՀԵՆԴԵՐՍՈՆ ՎԵՅՎՍ ԿԱՄՈՒՐՋ

Հենդերսոն Վեյվս կամուրջն ունի 274 մետր երկարություն և նախատեսված է հետիոտների համար: Ունենալով հիմնական ճանապարհից 36 մետր երկարություն՝ այն համարվում է Սինգապուրի ամենաբարձր հետիոտնատար կամուրջը: Հենդերսոն Վեյվսը միացնում է Մաունթ Ֆեյեր Փարկը Տելոկ Բլանգահ Հիլ Փարկին: Այն նախագծվել է Լոնդոնում տեղակայված IJP կորպորացիայի և Սինգապուրյան RSP Architects Planner and Engineers ՍՊԸ-ի կողմից:

Կամուրջն ունի յուրահատուկ ալիքաձև կառուցվածք և կազմված է 7 բլուրաձև կոր մետաղական կողերից, որոնք պարբերաբար բարձրանում և իջնում են կամուրջի հիմնական կոնստրուկցիայի առանցքով: Այսպես կոչված ալիքները կառուցված են այնպես, որ յուրաքանչյուր վերին և ստորին «ալիքը» ծառայում է որպես տեսահարթակ՝ հատուկ նախագծված նստատեղերով: Կամուրջի հատակը հավաքված է միայն հարավային Ասիայում աճող հատուկ բալաու ծառից պատրաստված տախտակներով: «Ալիքներն» ամեն երեկո ժամը 19:00 – ից մինչև 2:00 լուսավորվում են լեդ լուսավորիչների միջոցով:



1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

2010 թվականը Բանկի համար եղել է կայուն զարգացման և նոր ձեռքբերումների տարի: Չնայած Հայաստանի բանկային համակարգում նկատվող մրցակցության սրացման միտումներին, ինչը հատկապես արտահայտվում է վարկային ռեսուրսների առաջարկի ավելացմամբ, այդ թվում միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի շրջանակներում, Բանկին հաջողվել է տարին ամփոփել գործունեության հիմնական ցուցանիշների աճով: Բանկը գերակատարել է նաև շահույթի պլանավորված մեծությունը՝ այն հասցնելով ավելի քան 953 մլն ՀՀ դրամի:

Բանկը շարունակել է զարգանալ՝ ունենալով մի շարք էական ձեռքբերումներ, ապահովել է իր կողմից մատուցվող ծառայությունների թե որակական և թե քանակական աճ, արդյունավետ կերպով մշակել և ներդրել է նոր ծառայություններ:

2010թ. սկզբին Բանկը կնքեց համագործակցության երկու պայմանագրեր Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ՝ 5 մլն ԱՄՆ դոլարի ՓՄՁ վարկավորման և 3 մլն ԱՄՆ դոլարի Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում: Բանկը նաև շարունակել է համագործակցությունը FCI միջազգային ֆակտորինգային ընկերության և Գերմանահայկական հիմնադրամի ՓՄՁ վարկավորման և «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրերի հետ:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այս նպատակով Բանկը

կշարունակի ակտիվ գործունեություն ծավալել ինչպես առկա գործընկերների մասով համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր միջազգային կառույցների հետ համագործակցության ուղղությամբ՝ նպատակադրվելով առաջիկա 2-3 տարվա ընթացքում վարկային և այլ ծրագրերով համագործակցել առնվազն երեք միջազգային կազմակերպությունների հետ:

2010թ. վերջում Բանկն անդամակցել է Ազգային հիփոթեքային ընկերությանը և նախատեսում է տվյալ ծրագրի շրջանակներում տեղաբաշխել առնվազն 500 մլն ՀՀ դրամի վարկային միջոցներ:
Իր սեփականությունը հանդիսացող նոր շենքի հարմարավետ պայմաններում Բանկը 2010թ-ին շարունակեց հաճախորդների աճող բազայի բարձրորակ սպասարկումը մատուցվող ինչպես ավանդական, այնպես էլ հաճախորդների կարիքների առավելագույն բավարարմանը հարմարեցված այլընտրանքային ծառայությունների գծով:

Հաշվի առնելով Բանկի դերը ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման գործում և մասնակցությունը բոսսայի կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ն Բանկին շնորհել է «Բոսսայի լավագույն անդամ 2010» մրցանակ պետական պարտատոմսերի շուկայում:

Հաշվի առնելով ներդրումային գործիքների նկատմամբ հետաքրքրության աճի միտումները՝ 2010թ.-ին Բանկը շահագործել է նաև նոր ներդրումային վեբ կայք, որը հնարավորություն կտա առկա և պոտենցիալ ներդրողներին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալ Բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների, ինչպես նաև միջազգային շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հաշվի առնելով արդեն ձևավորված դրական փորձը՝ 2010թ.-ին Բանկը ձեռնամուխ եղավ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի երկրորդ թողարկման կազմակերպմանն ու տեղաբաշխմանը՝ հանդես գալով որպես «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի անդերրայթեր: Ընկերության կողմից թողարկված 1,400,000 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ընկերությունը ներգրավեց 1,554,000,000 ՀՀ դրամ գումարի չափով միջոցներ, ինչը ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի պատմության մեջ եզակի դեպքերից է:

Բանկը շարունակում է իր հաճախորդներին առաջարկել արժեթղթերի միջազգային շուկաներում էլեկտրոնային առևտրային համակարգերով գործառնություններ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքներ և այլն: 2010թ. Բանկն իրականացրել է նաև ոսկու ստանդարտ ծուլակտորներով և ոսկեդրամներով գործառնություններ: Նախնական քայլեր են կատարվել լիզինգի և հավատարմագրային կառավարման ներդրման ուղղությամբ: Բանկը պահպանել է պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդես է գալիս որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր (շուկա ստեղծող): Բանկը նախատեսում է շարունակել իր ակտիվ գործունեությունը ներդրումային ոլորտում:
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն անցել է զարգացման որակական նոր փուլի, որտեղ զարգացման կայուն հիմքերը պահպանվելու են կուտակված փորձով , ձեռքբերված շուկայական դիրքով, հեղինակությամբ և որակյալ անձնակազմով:

Բանկի անձնակազմի անունից շնորհակալություն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդին և Բաժնետիրոջը՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի անձնակազմին՝ իրենց նվիրված աշխատանքի համար:

Գևորգ Մաչանյան

Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն



2 ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ կորպորատիվ, ներդրումային և անհատական (corporate, investment և private) բանկային ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչև ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):
Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում, ընձեռել նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն: 2008թ. հունվարից ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը Factors Chain International-ի (Միջազգային ֆակտորինգային ասոցիացիա) անդամ է, ինչը հնարավորություն է տալիս Բանկին միջազգային ֆակտորինգային գործառնություններ իրականացնել ավելի քան 70 երկրում գտնվող շուրջ 250 անդամ-բանկերի միջոցով:
Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Այդ նպատակով Բանկն իր ստեղծման օրվանից ակտիվ գործունեություն է ծավալում նշված ոլորտում մատուցվող ծառայություններն ընդլայնելու նպատակով և զգալի աշխատանքներ է տանում այս ոլորտում առաջատար դիրքեր գրավելու ուղղությամբ: Արդյունքում, Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ:

Ֆինանսավորման և ածանցյալ գործիքների միջոցով մեր հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը: Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառույթներ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը ՀՀ արժեթղթերի շուկայի և ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջմղման գործում:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդների հետ ձևավորում է երկարատև ու գործընկերային հարաբերություններ, որոնց հիմքում ընկած են սերտ և փոխշահավետ համագործակցությունը: Արհեստավարժ, հմուտ և փորձառու անձնակազմի շնորհիվ Բանկը բացահայտում է հաճախորդների կարիքները և ժամանակին տալիս բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

ԲՐՈՒՔԼԻՆՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ

Բրուքլինյան կամուրջը Միացյալ Նահանգների ամենահին կախովի կամուրջներից մեկն է: Այն հատում է Իսթ Ռիվերը և Մանհեթեն կղզին միացնում Բրուքլինին: Դրա երկարությունն է 486,3 մետր: Այն 1883 թվականից մինչև 1903 թվականը համարվում էր աշխարհի ամենաերկար կախովի կամուրջը:
Իր այժմյան անունը կամուրջը ստացել է 1915 թվականին: Անմիջապես բացումից հետո այն դարձել է Նյու-Յորքի ամենագլխավոր խորհրդանիշը: 1964 թվականին Բրուքլինյան կամուրջը ճանաչվել է Ազգային Պատմական Հուշարձան, 1972 թվականին ստացել է Ազգային Պատմական Քաղաքացիական Ինժեներական Հուշարձանի կոչում:

ԹԱՈՒԵՐ ԲՐԻՋ

Թաուեր Բրիջը միաժամանակ և՝ կախովի, և՝ բացվող կամուրջ է: Այն գտնվում է Լոնդոնում և հատում է Թեմզա գետը: Կամուրջը բավական մոտ է գտնվում հանրահայտ Լոնդոնյան Թաուերին և դրանից էլ ստացել է իր անունը: Թաուեր Բրիջը դարձել է Լոնդոնի հիմնական խորհրդանիշներից մեկը:
Կամուրջը կազմված է երկու աշտարակներից, որոնք վերին մակարդակում միացված են հետիոտների համար նախատեսված երկու հարթակով: Այդ հարթակները կառուցվել են կամուրջի կախովի հատվածն ամրացնելու համար: Կամուրջը բացող սարքերը տեղադրված են աշտարակների հիմքերում: Թաուեր Բրիջը ի սկզբանե եղել է շագանակագույն, սակայն 1977 թվականին Թագուհու արծաթե հոբելյանի կապակցությամբ այն ներկվել է կարմիր, սպիտակ և կապույտ գույներով:
Հաճախ Թաուեր Բրիջը սխալմամբ անվանում են Լոնդոնյան կամուրջ, որը սակայն գտնվում է Թեմզայի հոսանքով բիչ վեր:

3 ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Բանկի գործունեության ընթացքում վարկային պորտֆելը դրսևորել է կայուն աճի միտում: 2010թ.-ի վերջի դրությամբ վարկային պորտֆելը կազմել է 12.8 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ աճելով 33%-ով: 2010 թվականին Բանկը տրամադրել է մոտ 11,9 մլրդ ՀՀ դրամի չափով վարկեր, իսկ նույն ժամանակահատվածում մարված վարկերը կազմել են մոտ 8,7 մլրդ ՀՀ դրամ:

Վարկային պորտֆելի աճի դինամիկան



Կորպորատիվ հաճախորդների վարկավորումը Բանկի ռազմավարական ուղղություններից է, ուստի վարկային պորտֆելի 77.3%-ը կազմում են իրավաբանական անձ հաճախորդներին տրամադրված վարկերը: Թեև Բանկը չի իրականացնում մասսայական սպառողական վարկավորում, սակայն մատուցվող ծառայությունների ամբողջականությունն ապահովելու նպատակով տրամադրում է ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային և ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր իր կորպորատիվ հաճախորդների ներկայացուցիչներին:



Բանկի պորտֆելում գերակշիռ մաս են կազմում արդյունաբերությանը և առևտրին տրամադրված վարկերը, որոնք կազմում են համապատասխանաբար 38% և 13%: Իսկ արդյունաբերությանը տրամադրված վարկերի հիմնական մասը՝ 47%-ը, կազմում են էներգետիկայի, մասնավորապես վերականգնվող էներգետիկայի ոլորտին, տրամադրված վարկերը, որտեղ Բանկը առաջատար դիրք է զբաղեցնում:

Տեղաբաշխված միջոցները ըստ տնտեսության ճյուղերի

2009-2010 թվականների ընթացքում վարկային պորտֆելի կառուցվածքը կրել է հետևյալ փոփոխությունները՝



Իր ներգրաված միջոցների արժութային կառուցվածքին համահունչ Բանկը դիվերսիֆիկացրել է նաև վարկային պորտֆելի արժութային կառուցվածքը, որում գերակշիռ տեղ են զբաղեցնում ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերը՝ 68.1 %, ՀՀ դրամով տրամադրված վարկերին բաժին է ընկնում պորտֆելի 30.9%-ը:

2010թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է համագործակցությունը Գերմանահայկական հիմնադրամի (GAF) հետ «Վերականգնվող էներգիայի զարգացում» և ՓՄՁ վարկավորում ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ ՓՄՁ ԶԱԿ (Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն) հետ, որի երաշխավորությամբ տրամադրվում են վարկեր տնտեսության համար առավել կարևորություն ունեցող բնագավառներում: 2010թ. տարեսկզբին ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի և ՎԶԵԲ (Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ EBRD)-ի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի ՎԶԵԲ-ի կողմից Բանկին տրամադրվել են 5 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ, որոնք նույնպես ուղղվելու են ՀՀ տնտեսության վարկավորմանը: Բացի այդ, ՎԶԵԲ-ի կողմից Բանկի համար հաստատվել է 3 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափ առևտրի ֆինանսավորման նպատակով, որն իր հերթին վարկավորման անուղղակի գործիք է հանդիսանում:
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ ՀԷԿ-երի ֆինանսավորմանն ուղղված ընդհանուր պորտֆելը կազմել է 2,250 մլն ՀՀ դրամ, որից մոտ 596 մլն ՀՀ դրամը Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրի (փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և վերազինման նպատակով տրամադրվող վարկեր) շրջանակներում տրամադրված վարկերի պորտֆելի մեծությունն է: Ընդ որում, Բանկն իրականացնում է ոչ միայն նոր ՀԷԿ-երի կառուցման և գործող ՀԷԿ-երի վերակառուցման նախագծերի ֆինանսավորում, այլև իր հաճախորդներին ընձեռում է ՀԷԿ-երում փայամասնակցություն ձեռք բերելու հնարավորություն:

Թեև Բանկը չունի մասնաճյուղեր, սակայն ակտիվորեն վարկավորում է ոչ միայն Երևանում, այլև տարածաշրջաններում գտնվող կազմակերպություններին: Այդ մասին է վկայում պորտֆելի 55%-ի տեղաբաշխումն այլ տարածաշրջաններում:



Վարկային ներդրումներից ստացված եկամուտներ

Վարկային պորտֆելի աճին համահունչ աճել են նաև վարկերից ստացված եկամուտները: 2010թ.-ի ընթացքում վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները կազմել են 1,705 մլն ՀՀ դրամ՝ 2009թ.-ի համեմատ աճելով մոտ 40.6 %-ով, ինչը վկայում է Բանկի ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված հիմնական ուղենիշներով սահմանված ցուցանիշների արդյունավետ կատարման մասին: Ոչ տոկոսային այլ եկամուտները կազմել են 63.7 մլն ՀՀ դրամ՝ աճելով ավելի քան 2.5 անգամ նախորդ տարվա 24.3 մլն ՀՀ դրամի համեմատությամբ:

Երաշխիքներ

2010թ.-ին Բանկն իր հաճախորդներին տրամադրել է 851.7 մլն ՀՀ դրամի պայմանագրի կատարման, կանխավճարի վերադարձման և մրցույթներին մասնակցության երաշխիքներ՝ 2009թ.-ին տրամադրված 314.5 մլն ՀՀ դրամի համեմատությամբ:
Երաշխիքներից ստացված եկամուտը 2010թ.-ին կազմել է 14.4 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 3 անգամ:

Վարկերից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան



ԿԱՊԵԼ ԿԱՄՈՒՐՋ

Կապել կամուրջն ունի 204 մետր երկարություն: Այն հատում է Շվեյցարիայի Լյուցեռն քաղաքով հոսող Ռեյսս գետը: Կապելը Եվրոպայում պահպանված ամենահին փայտե ծածկ ունեցող կամուրջն է և հանդիսանում է Շվեյցարիայի տեսարժան վայրերից մեկը: Կառուցվելով 1333 թվականին՝ այս կամուրջը նախագծված էր պաշտպանելու Լյուցեռն քաղաքը բազմաթիվ թշնամական հարձակումներից: Կամուրջի ներսում փակցված են 17-րդ դարի բազում նկարներ, որոնք պատկերում են Լյուցեռն քաղաքի պատմության հիշարժան իրադարձությունները: Այս նկարների և կամուրջի մեծ մասն այրվել է 1993 թվականին տեղի ունեցած մեծ հրդեհի ժամանակ, սակայն վնասները վերականգնվել են չափազանց սեղմ ժամանակահատվածում: Որպես մեծ հրդեհի վկայություն են մնացել միայն կամուրջի մասամբ սևացած հատվածները:

4 ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից մատուցվել են առևտրի ֆինանսավորման հետևյալ ծառայությունները՝ ներքին և միջազգային ֆակտորինգ, ակրեդիտիվներ, երաշխիքներ, ինկասո և ներմուծման գործարքների կարճաժամկետ ֆինանսավորում:

ՖԱԿՏՈՐԻՆԳ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է ֆակտորինգային գործարքների իրականացման արդյունավետության բարձրացման և հաճախորդների սպասարկման որակի բարելավման աշխատանքները: Բանկի կողմից մատուցվող ներքին ֆակտորինգային ծառայությունների կայուն աճի միտումը, որն արձանագրվել էր նախորդ տարիների ընթացքում, պահպանվեց նաև 2010 թվականին: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում իրականացված ներքին ֆակտորինգային գործարքների ծավալը կազմել է 3.95 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 42%-ով, իսկ տարվա արդյունքում ստացված եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է 43%-ով: Արձանագրված աճն ապահովվել է ինչպես գործող հաճախորդների հետ համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր հաճախորդների ներգրավման հաշվին:

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Բանկը 2010 թվականին շարունակեց զարգացնել և ընդլայնել առևտրի ֆինանսավորման ծառայությունների մատուցումը դեռևս տարվա սկզբին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ համատեղ մեկնարկած Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Այսպես, առևտրի ֆինանսավորման այլ գործիքներով մատուցված ծառայությունների, այդ թվում նաև Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկի կողմից թողարկված ակրեդիտիվների պորտֆելը 2010 թվականի վերջի դրությամբ կազմել է մոտ 340 մլն ՀՀ դրամ, իսկ միջազգային առևտրի ֆինանսավորմանն ուղղված վարկային պորտֆելը կազմել է 375 մլն ՀՀ դրամ:

Ներքին ֆակտորինգի շրջանառություն (մլն ՀՀ դրամ)



5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

2010թ-ի ընթացքում կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում Բանկի գլխավոր ձեռքբերումը կարելի է համարել 1,554,000,000 ՀՀ դրամ ծավալով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման ամբողջությամբ տեղաբաշխումը: Դա ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի պատմության մեջ իրականացված արժեթղթերի խոշորագույն հրապարակային առաջարկն (IPO) էր, որտեղ Բանկը հանդես եկավ որպես տեղաբաշխման կազմակերպիչ և հաշվարկային բանկ: Տեղաբաշխումն իրականացվեց երկու փուլով՝ գործող բաժնետերերի նախապատվության իրավունքով բաժնետոմսերի ձեռքբերմամբ և ազատ բաժանորդագրության միջոցով: Բանկն աջակցել է Ընկերությանը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բաժնետերերի կողմից բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման և սեփականատերերի անձնական հաշիվներին բաժնետոմսերի փոխանցման գործում:

Բացի բուն տեղաբաշխման ծառայություններից Բանկը մատուցում է նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երկրորդային շուկայի ակտիվացման (իրացվելիության ապահովման) ծառայություններ՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում իրականացնելով բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ և հանդես գալով որպես Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծող:

Ինչ վերաբերում է կորպորատիվ պարտատոմսերի շուկային, ապա հարկ է նշել, որ 2010թ-ի ընթացքում վերջինս գտնվում էր ծգնաժամային պասիվության փուլում: Էժան վարկային ռեսուրսների բարձր հասանելիության պայմաններում թողարկողների տեսանկյունից նվազել էր կոպորատիվ պարտատոմսերի՝ որպես ֆինանսավորման ռեսուրսների ներգրավման գործիքի, գրավչությունը: Կորպորատիվ պարտատոմսերի թողարկումներին խոչընդոտում էր նաև ժամանակավորապես ազատ դրամական միջոցների պակասուրդը և պետական պարտատոմսերի շուկայի բարձր եկամտաբերությունը:

Արդյունքում 2010թ-ի ընթացքում Բանկի կողմից կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխումներ չեն կազմակերպվել, փոխարենը Բանկի կողմից շարունակվել են իրականացվել շրջանառության մեջ գտնվող թողարկումների գծով մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկումը: Մասնավորապես, իրականացվել են «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ի պարտատոմսերի ամբողջությամբ մարումը և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի 3-րդ թողարկման պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարումը՝ 400 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Բանկի կողմից իրականացվել են նաև «ՀԱՅՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ-ի և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի 2-ական արժեկտրոնների, ինչպես նաև «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ի վերջին արժեկտրոնի վճարումները՝ 159 մլն ՀՀ դրամ (ներառյալ հարկերը) ընդհանուր ծավալով, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողներին և մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ:
2010թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է իր կողմից տեղաբաշխված կորպորատիվ արժեթղթերի գնանշումները Bloomberg միջազգային տեղեկատվական համակարգում՝ իր պաշտոնական ASWI տեղեկատվական էջում:

2010 թվականի ընթացքում Բանկը շարունակել է մատուցել նաև խորհրդատվական ծառայություններ իր կորպորատիվ հաճախորդների կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:



ՀԵԼԻՔՍ ԿԱՄՈՒՐՋ

Հելիքս (նախկինում Դաբլ Հելիքս) կամուրջը հետիոտների համար նախատեսված կամուրջ է, որը Սինգապուրի Մարինա Բեյում միացնում է Մարինա Սենթրը Մարինա Սաուֆին: Կամուրջի հատուկ կառուցվածքի շնորհիվ հետիոտների վրա են ընկնում յուրօրինակ շողքեր, ինչը դարձնում է այդ վայրը կախարդական: Այս կամուրջն ունի 5 տեսահրապարակ, որոնք հատուկ տեղադրված են Սինգապուրի ընդհանուր պատկերը և հաճախակի տեղի ունեցող միջոցառումները լավագույնս դիտելու համար: Գիշերային Հելիքս կամուրջը լուսավորվում է հատուկ լամպերի օգնությամբ այնպես, որ անցորդների աչքերի առջև բացվեն կամուրջի կառուցվածքային բոլոր յուրահատկությունները:



Բանկը 2010թ. ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես տարվա ընթացքում արժեթղթերի երկրորդային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 12.5 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ, որից 2.3 մլրդ-ը կազմել են բորսայական գործարքները: Հատկանշական է, որ 2010թ.-ի արդյունքներով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ճանաչվել է բորսայի լավագույն անդամ պետական պարտատոմսերի շուկայում, իսկ Բանկի կողմից պետական պարտատոմսերով կնքված գործարքների մասնաբաժինը ընդհանուր բորսայական գործարքներում կազմել է ավելի քան 37 տոկոս: Նկատվել է կորպորատիվ պարտատոմսերով գործարքների ծավալի նվազում, որը պայմանավորված է նոր թողարկումների բացակայությամբ՝ կապված այս շուկայում առկա հետճգնաժամային հիմնախնդիրներով, մասնավորապես, պարտատոմսերի շուկայում եկամտաբերությունները ներկայումս ավելի բարձր են, քան տնտեսության իրական հատվածում գործող ձեռնարկությունների կողմից ներգրավվող վարկերի տոկոսադրույքները: Այս հանգամանքը նվազեցրել է ընկերությունների կողմից կորպորատիվ պարտատոմսերի թողարկման գրավչությունը: Բանկը ՀՀ բաժնետոմսերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2010թ.-ի ընթացքում իրականացրել է այդ ընկերության բաժնետոմսերի երկկողմանի գնանշում՝ կնքելով մոտ 9800 հատ բաժնետոմսերի (10 մլն. ՀՀ դրամի) առք ու վաճառքի գործարքներ:

2010թ.ի ընթացքում Բանկը ներդրումային պորտֆելի համալրման նպատակով պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել մոտ 7,2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: 2010թ.-ին Բանկի պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալը նվազել է մոտ 1 մլրդ-ով, սակայն պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2009թ.-ի համեմատ աճել է 25 տոկոսով և կազմել է 1,419 մլն. ՀՀ դրամ, ինչը պորտֆելի միջին եկամտաբերության բարձրացման հետևանք է: Բանկը 2010թ.-ին պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամուտի դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջբանկային անկանխիկ արտարժութային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 126 մլրդ ՀՀ դրամ: 2010թ. Բանկը շարունակել է լայնորեն կիրառել արտարժութային սվոփ գործիքը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է շուրջ 110 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ: Ընդ որում, նշված ծավալի զգալի մասը ձևավորվել է Բանկի՝ արտասահմանյան շուկաներում ծավալած գործունեությունից:
Հատկանշական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնպես իրականացրել է սվոփ և ֆորվարդ գործարքներ, որոնց ծավալը 2010թ. ընթացքում կազմել է համապատասխանաբար 120 մլն և 65 մլն ՀՀ դրամ:
Բանկը, 2010թ.-ին շարունակելով ակտիվ գործունեություն ծավալել թանկարժեք մետաղների ներքին շուկայում, պահպանել է ՀՀ ֆինանսական համակարգում իր առաջատար դիրքը՝ ապահովելով ՀՀ բանկային համակարգում նշված գործառնությունների գծով ծավալների գերակշիռ մասը: Տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացվել է շուրջ 32.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով ոսկու ստանդարտացված ձուլակտորների առքի կամ վաճառքի գործառնություններ: Հարկ է նշել նաև, որ 2010թ.-ի ընթացքում Բանկն ընդլայնել է ներկրվող ոսկու ձուլակտորների տեսականին և այժմ նախկին 12.5 կիլոգրամանոց բանկային ոսկու ձուլակտորներից բացի իր հաճախորդներին է առաջարկում նաև ցածր քաշի ոսկու ստանդարտացված ձուլակտորներ՝ սկսած 5 գրամից մինչև 1 կգ: Բացի այդ 2010թ.-ին Բանկն առաջին անգամ Հայաստանում ներմուծեց և ներդրողներին առաջարկեց 10, 25, 50 և 100 եվրո անվանական արժեքներով աշխարհում լայն ճանաչում ունեցող «Վիեննայի Ֆիլհարմոնիա» ոսկեդրամները:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի, ՀՀ պետական պարտատոմսերի և արտարժութային ֆորվարդ ու սվոփ գործիքների գնանշում Reuters համակարգում, ինչպես նաև ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերի, արտարժութային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg տեղեկատվական համակարգում՝ Բանկի պաշտոնական էջում:
Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ինչպես ՀՀ տարածքում (բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ և վարկեր), այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 118.5 մլրդ և 23.5 մլրդ ՀՀ դրամ:

Բրոքերային գործունեություն

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավական լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործառնություններ և մարժինալ գործարքների կնքման հնարավորություն:
Ներդրումային ծառայությունների ոլորտում Բանկը բավական մեծ ձեռքբերումներ է ունեցել 2010թ. ընթացքում: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2009թ. համեմատությամբ աճել է մոտ 30 %-ով: Գործարքներ են կնքվել ռուսական, եվրոպական և ամերիկյան բորսաներում շրջանառվող առաջատար ընկերությունների բաժնետոմսերով և դեպոզիտար ստացականներով:
Ընդհանուր առմամբ, 2010թ.-ի ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիման վրա օտարերկրյա արժեթղթերով իրականացվել են թվով 1047 բրոքերային գործարք 6,26 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով: Վերոնշյալ ծավալի գերակշիռ մասը՝ 6,15 մլրդ ՀՀ դրամը, բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին: Բացի այդ Բանկն իր հաճախորդներին առաջարկել է օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքներ, որոնցով իրականացված գործառնությունների ծավալը 2010թ.-ին կազմել է 2.1 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 650 մլն ՀՀ դրամի համեմատությամբ, իսկ նշված գործարքներից եկամուտը կազմել է 4,6 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.1 անգամ: 2010թ. ընթացքում Բանկի ծավալած ակտիվ գործունեության շնորհիվ ավելացավ բրոքերային հաճախորդների թվաքանակը:

Նշենք նաև, որ 2010թ. ընթացքում Բանկը բավականին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններին: Այսպես օրինակ, Բանկն իր հաճախորդների հանձնարարականներով ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-ում կորպորատիվ պարտատոմսերով իրականացրել է 110 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով բրոքերային գործարքներ:

ՌԵՅՆԲՈՈՒ ԿԱՄՈՒՐՋ

Ռեյնբոուն կախովի կամուրջ է, որը հատում է Տոկիոյի հյուսիսային ծովածոցը, Շիբուհարա նավահանգիստը և Մինատոյի մոտ գտնվող Օդաբայա ափը: Կամուրջի կառուցումը սկսվել է 1987 թվականին և ավարտվել 1993-ին: Այն ունի 798 մետր երկարություն: Կամուրջը ամրացնող սպիտակ աշտարակները նախագծված են այնպես, որ համահունչ լինեն Տոկիոյի ընդհանուր պատկերի հետ: Մարդիկ կամուրջին տվել են Ռեյնբոու անունը, քանի որ այն պահող լարերի վրա տեղադրված են երեք տարբեր գույներով ներկված հատուկ լամպեր, որոնց լույսը հիանալի տեսարան է բացում անցորդների առջև: Կամուրջը նախատեսված ինչպես ավտոմեքենաների, այնպես էլ հետիոտների համար: Կամուրջի մուտքերը գտնվում են Թամաչի և Շիբուհարա-ֆուտոյ երկաթուղային կայարանների հարևանությամբ:



6 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի կառավարման մարմինները մշտապես կարևորել են Բանկի ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը, Տնօրինությունը, Ներքին աուդիտը, ինչպես նաև Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են ռիսկերի կառավարման գործընթացում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի գնահատման և ներդրման մի մասը:

Բանկում գործում է Ռիսկերի կառավարման առանձին ստորաբաժանում, որն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից և իրականացնում է ինչպես ընթացիկ, այնպես էլ որոշակի պարբերականությամբ հսկողություն Բանկի գործառնությունների նկատմամբ՝ ուսումնասիրելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին ու նպատակային ցուցանիշներին (benchmark):

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հիմնված ռիսկերի գնահատման և զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը և սահմանաչափերը՝ համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին:

Բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության համար պարբերաբար կիրառվում են սթրես թեստերի մոդելներ:

Բանկում գործում են վարկային ռիսկի գնահատման, արտարժութային (փոխարկային և ածանցյալ) գործառնությունների սահմանաչափերի որոշման մեթոդական ուղեցույցներ: Շուկայական ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը՝ ժամկետայնության ճեղքվածքի (GAP) մոդելը:

Բանկը միջազգայնորեն ընդունված սկզբունքներով իրականացնում է պայքար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ՝ համակողմանիորեն ուսումնասիրելով Բանկի հաճախորդներին, գործընկերներին և շահառուներին:

Բանկի Ներքին աուդիտն իր հերթին ուսումնասիրում է Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերը, գնահատում է դրանց նվազեցման և կանխարգելման նպատակով ձևավորված ներքին հսկողության մեխանիզմների բավարարությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև ստուգում է Բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

Բանկում գործում են որոշումներ կայացնող և խորհրդատվական կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն, Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ:

Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որը որդեգրած քաղաքականության շրջանակներում հաստատում է սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային և շուկայական ռիսկերը:

Գործառնական ռիսկերի կառավարման, ինչպես նաև հնարավոր կորուստները ծածկելու նպատակով Բանկը ձեռք է բերել ապահովագրական փաթեթներ (BBB, շենքի և գույքի ապահովագրություն):



7 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անձնակազմի կառավարման քաղաքականության նպատակն է՝ Բանկում անձնակազմի կառավարման որակի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և անձնակազմի պատասխանատու, ստեղծագործական աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը:
Մասնավորապես, Բանկը կարևորում է կադրերի ծառայողական առաջխաղացման գործոնը, այն է՝ աշխատակիցների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ մասնագիտական աճի, նոր գիտելիքների ձեռքբերման, նոր հմտությունների տիրապետման, ինչպես նաև սոցիալական բարեկեցության համար:
Բանկի գործառնությունների աճին զուգընթաց փոփոխվել է նաև Բանկի անձնակազմի կառուցվածքը և կազմը: 2010թ. ընթացքում Բանկը համալրել է իր անձնակազմը ինչպես փորձառու կադրերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (18 նոր աշխատակից): 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 82 հոգի: Աշխատակիցների միջին տարիքը կազմում է 30 տարեկան:
Բանկը մեծ ուշադրություն է դարձնում կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը՝ փոփոխվող օրենսդրական դաշտի յուրացման, տեխնոլոգիաների, ինստիտուցիոնալ գործընկերների հետ համագործակցության ուղիների ուսումնասիրման և այլ ուղղություններով:
2010թ. ընթացքում Բանկի 40 աշխատակից մասնակցել է 53 սեմինարի, պրեզենտացիայի, կոնֆերանսի ՀՀ տարածքում, արտասահման է գործուղվել 4 աշխատակից՝ մասնակցելու արտասահմանյան կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև կազմակերպվել է 38 ներքին սեմինար Բանկում: 2010 թվականի ընթացքում Բանկի 3 աշխատակիցների շնորհվեցին հավաստագրեր՝ FCI միջազգային ֆակտորինգային ընկերության կողմից կազմակերպված դասընթացին (FCI course on International Factoring) մասնակցելու և քննությունները բարեհաջող կերպով հանձնելու համար:
Բանկի աշխատակիցների կողմից ներկայացվել են մի շարք վերլուծական աշխատանքներ՝ Բանկին առնչվող խնդիրների վերաբերյալ:
Բանկի սոցիալական փաթեթի շրջանակներում ներդրված առողջության ապահովագրությանը 2010 թվականի ընթացքում մասնակցեց Բանկի աշխատակիցների շուրջ 70%-ը:
Բանկի աշխատակիցների համար կազմակերպվել են կորպորատիվ միջոցառումներ, երեկույթներ և այլն: Այս ամենը նպաստել է աշխատակիցների միջև միջանձնային հարաբերությունների ամրապնդմանը՝ ձևավորելով համագործակցության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ ու թիմային առողջ ոգի:
Բանկի գործունեության և զարգացման փուլերին համահունչ վերանայվել է Բանկի կազմակերպական կառուցվածքը, որի արդյունքում 2010թ սկզբին ստեղծվեց Բիզնեսի զարգացման դեպարտամենտը՝ շեշտադրելով հաճախորդների ներգրավումը և կարևորելով մարքեթինգային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև միջազգային կառույցների հետ համագործակցությունը:

ARMSWISSBANK
Private & Investment Banking

ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ավարտել է իր գործունեության վեցերորդ տարին՝ բոլոր հիմնական ցուցանիշների գծով գրանցելով էական աճ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 5,5 մլրդ ՀՀ դրամով կամ 19%-ով՝ կազմելով 35,1 մլրդ ՀՀ դրամ: Ակտիվների կազմում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներն աճել են 1,8 մլրդ ՀՀ դրամով, հաճախորդներին տրված վարկերը աճել են 2,7 մլրդ ՀՀ դրամով, հետգնման պայմանագրերով գրավադրված (վաճառված՝ հետ գնելու պայմանով) արժեթղթերը նվազել են 1,2 մլրդ ՀՀ դրամով: Ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում վարկերը՝ 37%, արժեթղթերը՝ 36%, միջբանկային ավանդները՝ 12%:

Ակտիվների կառուցվածքը և դինամիկան

(հազար ՀՀ դրամ)



Պարտավորությունների կառուցվածքը և դինամիկան

(հազար ՀՀ դրամ)



- Այլ պարտավորություններ
- Հաճախորդներից ներգրավված միջոցներ
- Ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցներ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 4,5 մլրդ ՀՀ դրամով կամ 21%-ով՝ կազմելով մոտ 26,1 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորությունների կազմում նույնպես տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն աճել են 1 մլրդ ՀՀ դրամով, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 3,4 մլրդ դրամով:

ՓԵՐԼ ԿԱՄՈՒՐՋ (ԱԿԱՇԻ ԿԱՅԿՅՈ ԿԱՄՈՒՐՋ)

Ակաշի Կայկյո կամ Փերլ կամուրջն ամբողջ աշխարհում հայտնի է իր ամենաերկար կենտրոնական կամարի բացվածքով, որի երկարությունն է 1991 մետր: Կամուրջը գտնվում է Ճապոնիայում, դրա կառուցումը ավարտվել է 1998 թվականին: Մինչ կամուրջի կառուցման ավարտը՝ Ակաշիի նեղուցով ուղևորներին տեղափոխում էին բազմաիվ փոքր նավակներով, ինչը շատ վտանգավոր էր՝ հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցող հաճախակի ցունամիները և երկրաշարժերը: 1955 թվականին այս նեղուցում խորտակվեց երկու շոգենավ, և ավելի քան 160 մարդ զոհվեց: Այս միջադեպից հետո երկրում անցան համատարած բողոքի ցույցեր, և կառավարությունը ընդունեց կամուրջի կառուցման մասին որոշումը: Նախնական նախագծով կամուրջը լինելու էր և ավտոմեքենաների, և գնացքների համար, սակայն երբ 1986 թվականին կամուրջի կառուցումը փաստացի սկսվեց, կոնստրուկցիայի նախագիծը փոխվեց, ներառելով ընդամենը 6 ավտոտար գիծ: Այս հսկայական կամուրջի կառուցումը տևեց 8 տարի և ավարտվեց 1998 թվականի ապրիլի հինգին: Կամուրջի մոտավոր արժողությունն է 500 միլիարդ Ճապոնական իեն: Այս գումարը արդարացնելու համար կամրջով անցնող վարորդները վճարում են 2.300 իեն: Ամեն օր կամրջով անցնում է մոտավորապես 23.000 ավտոմեքենա:

ՉԵՅՆ ԿԱՄՈՒՐՋ

Չեյն կախովի կամուրջն անցնում է Դանուբ գետի վրայով և միացնում է Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի արևելյան և արևմտյան մասերը՝ Բուդան և Պեշտը: Այն բացվել է 1849 թվականին և հանդիսանում է Դանուբ գետը հատող առաջին հիմնական կամուրջը:
Չեյն կամուրջի երկու մուտքերի մոտ են գտնվում բազմաթիվ կարևորագույն կառույցներ և մշակութային մեծ արժեք ներկայացնող վայրեր: Այսպես՝ կամուրջի Բուդա կողմի մուտքի մոտ է Ադամ Քլարք Սքուերը և Բուդա ամրոց տանող Քասլ Հիլ ճոպանուղին, իսկ Պեշտ կողմի մուտքի մոտ՝ Ռուզվելտ Սքուերը, որը հարակից է հանրահայտ Գրեշամ պալատին:
Կամուրջը կրում է կառուցման հիմնական աջակից հովանավոր Իստվան Շժեչենյիի անունը, սակայն հանրության մեջ այն հայտնի է որպես Չեյն կամուրջ: Իր կառուցման ավարտին Չեյն կամուրջը համարվում էր իր ժամանակի ինժեներական հրաշալիքներից մեկը: Այն ահռելի դեր է խաղացել երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում: Նման երևույթ է դիտվել նաև Նյու Յորքի Բրուքլին կամուրջի կառուցումից հետո: Կամուրջի պողպատյա ձևավորումը ստեղծում է և ազնվականության տպավորություն: Չեյն կամուրջը դարձել է ազգի բարգավաճման հիմնական խորհրդանիշը:

Հաշվետու տարվա ընթացքում բանկի զուտ տոկոսային եկամուտները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 37%-ով կամ 464 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 1,7 մլրդ ՀՀ դրամ: Վարկերից և արժեթղթերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտներում կազմել է 98%:

Բանկի տարեկան շահույթի աճի դինամիկան շահութաբերության ցուցանիշները



2010թ-ին Բանկի զուտ շահույթը կազմել է մոտ 953 մլն ՀՀ դրամ: 2009թ-ի համեմատությամբ շահույթը աճել է 393 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է Բանկի եկամտաբեր ակտիվների, ՀՀ պետական պարտատոմսերի տարեկան եկամտաբերության աճով: Արդյունքում Բանկի ստեղծման օրվանից մինչև 2010թ-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կուտակված չբաշխված շահույթը կազմել է ավելի քան 2.1 մլրդ ՀՀ դրամ, որից կատարվել է 500 մլն ՀՀ դրամի չափով հատկացում գլխավոր պահուստին:
2010թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 9 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 12%-ով, որը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի շահույթով:



GrantThornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

«Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և Խորհրդին.

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Բանկի տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

GrantThornton

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

Եզրակացություն
Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արմեն Վանյան
Աուդիտոր

14 փետրվարի 2011
ք. Երևան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2010թ.դեկ. 31-ին ավարտված տարվա համար	2009թ. դեկ. 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	**3,316,153**	2,513,160
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	**(1,583,504)**	(1,244,919)
Զուտ տոկոսային եկամուտներ		**1,732,649**	1,268,241
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	**92,897**	75,883
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	**(13,049)**	(18,166)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		**79,848**	57,717
Զուտ առևտրային եկամուտ	8	**68,960**	62,961
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ		**39,184**	156,733
Այլ եկամուտներ	9	**74,465**	74,930
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	17	**(42,528)**	(299,971)
Անձնակազմի գծով ծախսեր	10	**(480,447)**	(416,427)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	**(57,944)**	(34,423)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	**(6,529)**	(5,912)
Այլ ծախսեր	11	**(202,096)**	(176,127)
Շահույթ մինչև հարկում		**1,205,562**	687,722
Շահութահարկի գծով ծախս	12	**(252,571)**	(127,404)
Տարվա շահույթ		**952,991**	560,318
Այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)		**(186,985)**	69,733
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ (օգուտ)/վնաս		**196,158**	(109,833)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ		**(1,834)**	8,067
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		**7,339**	(32,033)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**960,330**	**528,285**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2010թ. դեկ. 31-ի դրությամբ	2009թ. դեկ. 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	**4,040,968**	2,030,121
Թանկարժեք մետաղներ	14	**153,785**	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	**4,368,441**	2,595,767
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	**20,644**	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	**13,034,621**	10,376,790
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	18	**7,347,074**	6,771,933
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	**5,320,918**	7,070,431
Հիմնական միջոցներ	19	**619,868**	668,888
Ոչ նյութական ակտիվներ	20	**50,354**	41,853
Հետաձգված հարկային ակտիվ	12	**16,306**	38,995
Այլ ակտիվներ	21	**191,233**	54,483
Ընդամենը՝ ակտիվներ		**35,164,212**	29,649,261
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	22	**5,661,265**	7,842,153
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	**10,716**	-
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	**7,936,890**	4,674,120
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	**12,313,526**	8,902,263
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		**127,913**	81,375
Այլ պարտավորություններ	25	**84,134**	79,912
Ընդամենը՝ պարտավորություններ		**26,134,444**	21,579,823
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	27	**7,002,000**	7,002,000
Գլխավոր պահուստ		**500,000**	200,000
Այլ պահուստներ		**(144,659)**	(151,998)
Չբաշխված շահույթ		**1,672,427**	1,019,436
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**9,029,768**	8,069,438
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**35,164,212**	**29,649,261**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրում-ների գծով վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2009թ. դրությամբ	5,001,000	100,000	(119,965)	559,118	5,540,153
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,001,000	-	-	-	2,001,000
Հատկացում պահուստին	-	100,000	-	(100,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	2,001,000	100,000	-	(100,000)	2,001,000
Տարվա շահույթ	-	-	-	560,318	560,318
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	69,733	-	69,733
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	(109,833)	-	(109,833)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	8,067	-	8,067
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	(32,033)	560,318	528,285
Հաշվեկշիռը 31.12.09թ. դրությամբ	**7,002,000**	**200,000**	**(151,998)**	**1,019,436**	**8,069,438**
Հատկացում պահուստին	**-**	**300,000**	**-**	**(300,000)**	**-**
Սեփականատերերի հետ գործարքներ	**-**	**300,000**	**-**	**(300,000)**	**-**
Տարվա շահույթ	**-**	**-**	**-**	**952,991**	**952,991**
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	**-**	**-**	**(186,985)**	**-**	**(186,985)**
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ վնաս	**-**	**-**	**196,158**	**-**	**196,158**
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**(1,834)**	**-**	**(1,834)**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**7,339**	**952,991**	**960,330**
Հաշվեկշիռը 31.12.10թ. դրությամբ	**7,002,000**	**500,000**	**(144,659)**	**1,672,427**	**9,029,768**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31.12.10 թ-ին ավարտված տարվա համար	31.12.09 թ-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	**1,205,562**	687,722
Ճշգրտումներ		
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	**42,528**	299,971
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	**64,473**	40,335
Հիմնական միջոցների վաճառքից զուտ (եկամուտ)/վնաս	**(140)**	36
Ստացվելիք տոկոսներ	**(140,627)**	(93,418)
Վճարվելիք տոկոսներ	**114,015**	9,712
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային վերագնահատումից զուտ (եկամուտ)/վնաս	**9,015**	(19,115)
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	**(9,928)**	-
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**1,284,898**	925,243
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Թանկարժեք մետաղներ	**(153,785)**	110,496
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(1,792,252)**	(803,315)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**(2,992,258)**	(2,596,166)
Այլ ակտիվներ	**(63,478)**	56,798
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ռեպո համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	**(2,199,985)**	(2,844,637)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(88,340)**	2,308,391
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**3,003,516**	(2,137,488)
Այլ պարտավորություններ	**20,175**	52,944
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**(2,981,509)**	(4,927,734)
Վճարված շահութահարկ	**(185,178)**	(68,171)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(3,166,687)**	(4,995,905)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	**1,281,803**	(3,311,025)
Հիմնական միջոցների առք	**(8,951)**	(414,255)
Հիմնական միջոցների վաճառք	**167**	800
Ոչ նյութական ակտիվների առք	**(15,030)**	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**1,257,989**	(3,724,480)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	**-**	2,001,000
ՀՀ ԿԲ-ից վարկերի ստացում	**7,445**	2,012,715
Ֆինանսական կազմակերպությունների վարկերի ստացում	**3,328,803**	1,827,673
Այլ երկարաժամկետ վարկեր	**755,317**	308,725
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**4,091,565**	6,150,113
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**2,182,867**	(2,570,272)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**2,596,993**	4,274,357
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(46,936)**	892,908
Դրամական միջոցների և դրանց համարժեքների ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ.13)	**4,732,924**	2,596,993
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**3,175,545**	2,419,742
Վճարված տոկոսներ	**(1,469,489)**	(1,235,207)

Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը

Ավստրիա

Վիեննա	Raiffeisen Zentralbank Osterreich AG	EUR USD	RZBA AT WW

Շվեյցարիա

Ցյուրիխ	UBS AG	CHF EUR USD	UBSW CH ZH80A

Գերմանիա

Ֆրանկֆուրտ Մայնի վրա	Commerzbank AG	EUR USD	COBA DE FF

Ռուսաստանի Դաշնություն

Մոսկվա	UniCreditBank	RUB EUR USD GBP CHF	IMBK RU MM
Մոսկվա	Promsvyazbank JSCB	RUB EUR USD	PRMSRUMM

Լատվիա

Ռիգա	Norvik Bank JSC	EUR USD	LATBLV22

Հայաստանի Հանրապետություն

Երևան	Central Bank of Armenia	EUR USD AMD	CBRA AM 22

Մասնակցություն և անդամակցություն

Հայաստանի Բանկերի Միություն (UBA)
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա Հայաստանի Ֆոնդային Բորսա
Առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների միջազգային ցանց (FCI)
Համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցման ընկերություն (SWIFT)
ԱԲՈԱ վարկային բյուրո
Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատ (AMCHAM)
Գերմանահայկական հիմնադրամի գործընկեր բանկ («Վերականգնվող էներգետիկայի զարգացում» վարկային ծրագիր)
ՓՄՁ ԶԱԿ (Փոքր և Միջին Ձեռնարկությունների Զարգացման Ազգային Կենտրոն)
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)
Ազգային Հիփոթեքային Ընկերություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անվանում՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա #84,
տրված է ՀՀ ԿԲ կողմից 25.02.2005թ-ին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 02574955
ԿԲ թղթակցային հաշիվ՝ 103002102509
SWIFT կոդ՝ ARSJAM22
Reuters էջ՝ ARSJ, ARSI
Bloomberg էջ՝ ASWI
Հեռախոս՝ +374 10 529593, 584419, 540728
Ֆաքս՝ +374 10 529591
էլ-փոստ՝ info@armswissbank.am
URL: www.armswissbank.am, www.armswissbank.com
Սպասարկման ժամերը՝ 9:30 - 17:30